ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1993 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻՑ

1—15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1997 Թ.

№ 17 (103)

ԳԻՆԸ՝ 50 ԴՐԱՄ



Ողջո՜ւյն, նոր սերունդ

Ողջո՜ւյն, դպրոց...
Ողջո՜ւյն, բուհ...
Ողջո՜ւյն, նոր սերունդ...

Մենք գիր ու գրականություն ունենք անհիշելի ժամանակներից: Մենք ամրոցներ ու պալատներ ենք կառուցել հին-հին դարերից:

Մենք Նարեկացի ունենք, որ դեռ 10-րդ դարում գրում էր, թե աստղերը պայթյունի ուժով են տարածվել տիեզերքում:

Իսկ ո՞վ ես դու, նոր սերունդ, վաղվա քաղաքացի, երկրի վաղվա օրը կերտող ու այդ կերտածի իսկական տերը:

Այսօր դու կմտնես քո դասասենյակը, քո լսարանը, լաբորատորիան, գրադարանը: Այս էլ քանի հազարամյակ մեր երկրում կկսվի ուսումնական տարին, կհնչեն զանգերը՝ ղողանջները գիտության, լուսավորության, ղողանջները՝ գալիքի:

Մեր երկիրը շատ է տառապել, ու չասենք, թե միայն օտարների պատճառով: Մեզ շատ բան է պակասել՝ իրատեսություն, բնօրրանը ամենից թանկ գնահատելու հայրենասիրություն, վստահություն՝ սեփական ուժերի նկատմամբ: Մեզ պակասել է հանդուրժողականություն՝ իրար նկատմամբ, դիմացինի կարծիքն ու իրավունքը հարգելու պատրաստակամություն: Ու գիտենք այդ ամենը, գիտենք ու... հանդուրժում ենք:

Գալիք նոր սերունդ, 21-րդ դարի քաղաքացի, համաշխարհային ցնցող իրադարձությունների ականատես, մասնակից, հեղինակ:

Սիրիր քո դպրոցը, քո բուհը, քո գիրքը, քո պատմությունը: Դա է, ի վերջո, հայրենիքը:

Նոր փուլի նախաշեմին

Հայաստանի ԳԱԱ հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտը 50 տարեկան է:

Նորաստեղծ գիտական հաստատությանը Երևանի շրջակայքում հատկացվեց 5 հա նոսր, ծերացած և անխնամ այգի, որտեղ 2—3 տարվա ընթացքում կառուցվեցին լաբորատոր և օժանդակ շենքեր, վեգետացիոն ցանց և այլ շինություններ: Լաբորատորիայի փոքրաթիվ (սկզբնական շրջանում՝ 8—12 մարդ) կոլեկտիվը 1947—1960 թթ. կատարեց բազմաթիվ արժեքավոր հետազոտություններ՝ նվիրված Հայաստանի տարբեր բնակլիմայական գոտիներում գյուղատնտեսական մի շարք մշակաբույսերի պարարտացման խնդիրներին:

Հետաքրքիր ուսումնասիրություններ կատարվեցին Սևանա լճի ջրերից ազատված հողերի ագրոքիմիական բնութագրման ուղղությամբ, առաջարկվեցին դրանց նպատակահարմար օգտագործման միջոցառումներ: Դրան զուգընթաց, մշակվեցին և ԽՍՀ գյուղատնտեսության նախարարությանը ներկայացվեցին հանձնարարականներ՝ հանրապետության տարբեր շրջաններում գյուղատնտեսական մշակաբույսերի պարարտացման վերաբերյալ:

Սկսած 1951 թվականից, առաջին անգամ Անդրկովկասում, ագրոքիմիայի լաբորատորիայում կիրառվեց իզոտոպների մեթոդը, որի օգնությամբ ստացվեցին հետաքրքիր տվյալներ՝ հողից ու պարարտանյութերից բույսի մեջ ֆոսֆորի թափանցման և տեղաբաշխման վերաբերյալ:

Մշակվեց և արտադրական պայմաններում փորձարկվեց առվույտադաշտում, առանց վարի, հացահատիկային մշակաբույսերի աճեցման նոր եղանակ, որը հնարավորություն է տալիս ոչ միայն հրաժարվելու վարից ու պահպանելու առվույտադաշտը, այլև, պարարտացման հատուկ համակարգի կիրառման շնորհիվ, նույն դաշտից միաժամանակ ստանալու աշնանացան ցորենի ու գարու բարձր և որակյալ բերք: Այս նոր եղանակը հնարավոր է դարձնում կրկնակի օգուտ ստանալու հողի նույն տարածությունից: Այն ունի նաև մեծ նշանակություն թեք հարթությունները երկրագործության համար պիտանի դարձնելու և հողերը էրոզիայից պաշտպանելու տեսակետից:

Եթե 1947—1956 թվականներին լաբորատորիան հիմնականում զբաղվում էր ցյուղային ագրոքիմիայի հարցերով, ապա 1956—1960 թթ. կոլեկտիվի հիմնական ջանքերն ուղղվեցին ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԳՐՈՔԻՄԻԱՅԻ մի շարք հիմնահարցերի մշակմանը, ընդգրկելով երկրագործության քիմիացման ավելի լայն ու հեռանկարային խնդիրներ:

Նմանօրինակ աշխատանքներից հատկապես ուշադրության է արժանի Հայաստանի գլխավոր հողատիպերի ագրոքիմիական բնութագրման հիմնախնդրի ուսումնասիրությունը: Այն ընդգրկում է Հայաստանի բոլոր հողատիպերի ագրոքիմիական, հողագիտական, մանրէակենսաբանական, ֆերմենտատիվ ու ռադիոակտիվության, մի շարք ֆիզիկաքիմիական ցուցանիշների մանրազնին և համալիր ուսումնասիրություններ, թույլ է տալիս պարարտանյութերի նկատմամբ գյուղատնտեսական մշակաբույսերի պահանջարկի էմպիրիկ մեթոդից անցնելու հանրապետության ամբողջ հողածածկի վրա տարբեր պարարտանյութերի հնարավոր արդյունավետության կանխատեսմանը, որը կնպաստի երկրագործության քիմիացման պլանավորմանը:

Այդ հիմնախնդրի ուսումնասիրության ուղղությամբ ձեռք բերված արդյունքների հիման վրա առաջին անգամ կազմվեց Հայկական ԽՍՀ հողածածկի ագրոքիմիական սխեմատիկ քարտեզը:

Գիտությունների ակադեմիայի ագրոքիմիայի լաբորատորիայի գործունեության ծավալմանը նպաստեցին բույսերի անհող մշակույթի բնագավառում ձեռք բերված առաջին հաջողությունները: Առաջին փորձերն այդ ուղղությամբ կատարվեցին 1956 թվականին, ակադեմիկոս Գագիկ Դավթյանի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ: Արդյունքները բավականին խոստումնալից էին, որոնք և հիմք ծառայեցին կառուցելու ԽՍՀՄ-ում առաջին և այն ժամանակ ամենամեծ կիսաավտոմատ բացօթյա հիդրոպոնիկական փորձակայանը՝ մոտ 1.000 քառակուսի մետր օգտագործելի մակերեսով: 1966 թվականին Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհուրդը հավանություն տվեց ԳԱ նախագահության որոշմանը՝ լաբորատորիան ագրոքիմիական պրոբլեմների և հիդրոպոնիկայի ինստիտուտի վերակազմելու մասին: Պետք է նշել, որ այն, իր գիտական նպատակամղվածությամբ, առաջին ինքնուրույն ակադեմիական ինստիտուտն էր նախկին Միությունում:

Հավանության արժանացան ինստիտուտի գիտական երկու նոր ուղղությունները՝ բնության մեջ կարևորագույն սննդատարրերի տեղաբաշխումը, շրջանառությունն ու հաշվեկշիռը և առանց հողի, արդյունաբերական եղանակով բարձրակարգ ու ստորակարգ բույսերի արտադրության ֆիզիոլոգիա-ագրոքիմիական, կենսաքիմիական և փորձակոնստրուկտորական հետազոտությունները: Երկու հիմնադիրներն էլ շատ ուրույն, հրատապ ու կարևոր գիտական ուղղություններ են և ունեն ոչ միայն տեսական, այլև ժողովրդատնտեսական խոշոր նշանակություն:

Առաջին ուղղության ասպարեզում արված հետազոտությունները բացահայտեցին ազոտի, ֆոսֆորի և կալիումի ելի ու հաշվեկշռի հիմնական օրինաչափությունները՝ ըստ հողակլիմայական ու գյուղատնտեսական գոտիների և բուսաբուծության առանձին ճյուղերի:

Այնփոփվեցին սննդատարրերի և աղերի շրջանառության բազմամյա հետազոտությունների արդյունքները տարբեր հողատեսակներում՝ լիզիմետրիկ փորձերի հիման վրա, որոնք ունեն գիտական և գործնական նշանակություն:

Ինստիտուտի Դիլիջանի փորձակայանում առաջին անգամ սկսվեցին անտառային բիոգեոցենոզներում քիմիական տարրերի շրջանառության և հաշվեկշռի հետազոտությունները, բացահայտվեցին հողծառ համակարգում դրանց շրջանառության որոշ օրինաչափություններ: Մշակվեցին անտառների արդյունավետության բարձրացման գիտականորեն հիմնավորված գործնական հանձնարարականներ՝ անտառների բնապահպանողական ֆունկցիաների ուժեղացման համար: Ուսումնասիրվել են նաև անտառային բիոգեոցենոզներում ռադիոնուկլիդների տեղաշարժի օրինաչափությունները: Ի հայտ է բերված դրանց պարունակության կտրուկ տատանում խոտի մեջ և մամուռներում, որը հնարավոր է դարձնում վերջինիներս օգտագործել որպես միջավայրի ռադիոաղտոտման ցուցիչ:

Ավարտված են Սևանա լճի ավազանի, Ծիրակի հարթավայրի, Արարատյան դաշտի և



Աշտարակային հիդրոպոնիկ ջերմատուն:

Հայաստանի նախալեռնային գոտու ոռոգման համակարգի ջրերի ագրոքիմիական հետազոտությունները:

Բնության մեջ նյութերի շրջանառության կարգավորման գործում Սևանա լճի դերը բացահայտելու և նրա էկոլոգիական վիճակը բարելավելու նպատակով, մանրազնին ուսումնասիրված է լիճ և Հրազդան թափվող գետերի ու գետակների ջրաքիմիական կազմը:

Առանց հողի, արդյունաբերական եղանակով բարձրակարգ ու ստորակարգ բույսերի արտադրության ֆիզիոլոգա-ագրոքիմիական,կենսաքիմիական և փորձակոնստրուկտորական հետազոտությունների ուղղությամբ նույնպես կատարվել են մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ:

Այդ հետազոտությունների առաջին փուլում (1956—1965 թվականներ) ուսումնասիրվեցին մի շարք բանջարաբուստանային և համեմունքային մշակաբույսերի անհող աճեցման հնարավորությունը:

1965 թվից սկսած, ինստիտուտը ձեռնամուխ եղավ հետազոտությունների նոր փուլին, որն ընդգրկեց արդյունաբերական բուսաբուծության ավելի լայն տեսական և գործնական խնդիրներ:

Այդ բազմամյա հետազոտություններն ապացուցեցին միջավայրի գործոնների և արմատային սնուցման ղեկավարվող պայմաններում բույսերի հիդրոպոնիկ արտադրու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Նախագահությունը քննարկեց

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՆՑ ԲԱՐԴՈՒՅԹՆԵՐԻ

Հայաստանի Հանրապետության ԳԱԱ երկրի մասին գիտությունների պրոբլեմային գիտական խորհրդի նախագահ, ակադեմիկոս Բ. Կարապետյանը նախագահությանը հաղորդեց գիտական խորհրդի գիտական և գիտակազմակերպական գործունեության մասին: Նախագահությունը նշեց, որ պրոբլեմային գիտական խորհուրդը մշակել և կառավարությանն է ներկայացրել հիմնավորված առաջարկություններ և ծրագրեր, որոնց իրականացումը կօգնի հանրապետության լեռնային արդյունաբերությանը, բնական հումքի ավանդական և նոր, ոչ ավանդական տեսակների հայտնաբերմանը ու արտադրության մեջ ներդրմանը, կազմել է ՀՀ տարածքի սեյսմաշրջանացման նոր քարտեզը, որը հանդիսացել է ՀՀ առաջին սեյսմակայունության նորմերի հիմնական մասերից մեկը, ապահովել է երկրի մասին գիտությունների ամսագրի առանց ընդմիջման տպագրումը (արդեն հրատարակվել է 1997 թ. 1-ին համարը, 2-րդ համարը գտնվում է հրատարակման փուլում): Խորհուրդը ակտիվ մասնակցություն է ունեցել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների ընտրությունների նախապատրաստման, երկրի մասին գիտությունների զարգացման հիմնական ուղղությունների մշակման հարցերում, կազմակերպել է քննարկումներ առանձին պրոբլեմների շուրջը, մասնակցել է արտասահմանյան գիտական կենտրոնների հետ համագործակցության կազմակերպմանը:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը միաժամանակ նշում է, որ խորհուրդը դեռ լրիվ չի օգտագործել իր հնարավորությունները: Բավարար չի կարելի համարել ինստիտուտների համագործակցության աշխատանքները, չեն կազմակերպվել միասնական գիտական կոլեկտիվների և թեմաների նախնական գնահատման աշխատանքները:

Նիստը նախագահող ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. ՍԱՐԳՍՅԱՆԸ կարևորեց այն հարցը, որ պրոբլեմային գիտական խորհուրդը պետք է համագործակցված աշխատի ՍՊԱԾ-ի հետ, մի բան, որ այսօր համարյա չի կատարվում: Ակադեմիան ՀՀ կառավարության խորհրդատուն է, ուրեմն նա չի կարող մեկուսացված աշխատել, նա պետք է համագործակցի բոլոր կազմակերպությունների հետ, որպեսզի խուսափի անհարկի կրկնություններից, իրարից անտեղյակ նույն խնդիրների զուգահեռ քննարկումներից:

Նիստի մասնակիցների կողմից եղան գործնական առաջարկներ և դիտողություններ:

Ռ. ԶՐԲԱՇՅԱՆ.— (երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս).

— Մեր շատ քայլեր ՍՊԱԾ-ի կողմից անպատասխան են մնացել: Մեր պրոբլեմային խորհուրդը կապեր չունի արտասահմանյան կազմակերպությունների հետ, մինչդեռ, մեծ են համագործակցության ոլորտները:

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ.— (ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս).

— Ակադեմիայի պրոբլեմային խորհուրդներում ընդգրկված են լավագույն մասնագետները: Բայց արդյունքը այդ չի վկայում: Քիչ են գիտական քննարկումները, տեսական հարցերը, կապը՝ արտասահմանի հետ: Խորհուրդները պետք է օգնեն ինստիտուտներին և չաշխատեն ձևականորեն:

ՑՈՒ. ԾՈՒՔՈՒՐՅԱՆ.— (ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս).

— Գիտական հիմնական ուղղությունները չը-պետք է վերածել դոգմայի, աշխատանքի ընթացքում պետք է քննարկել, վերանայել, նոր առաջարկություններ անել: Ի՞նչ է նշանակում՝ հաստատված մեկ թեմա: Պետք է հստակ իմանալ, թե գալիք 5 տարում, ասենք, ո՞րն է գեոֆիզիկայի հիմնական խնդիրը՝ նկատելով մեր հանրապետության կյանքից: Մեր գիտնականները չեն ստանում ՍՊԱԾ-ի տվյալները, իսկ դրանք շատ կարևոր են:

Ամփոփելով հարցի քննարկումը, պրեզիդենտ Ֆ. Սարգսյանը նշեց, որ մեր օրերում մեկուսացված չի կարելի աշխատել, չի կարելի չտեսնել ուրիշներին, վանել մեզանից:

Հանուն գիտության, հանուն մեր հանրապետության անվտանգության ապահովման, անհրաժեշտ է հրաժարվել ամբիցիաներից ու բարդույթներից:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

Ամեն դարաշրջան իր դեմքն է ստեղծում, որի հիմքը դարակազմիկ հայտնագործությունն է: Ջերմային էներգիա, ներքին այրման շարժիչ, ռադիոկապ, երկրի ձգողականության հաղթահարում, հեռուստատեսություն, հեռակապ: 21-րդ դարի նախաշեմին ծնվեց միջազգային համակարգչային, արբանյակային կապը, որն իր հնարավորությունները ամբողջությամբ կդրսևորի 21-րդ դարում: Հեռուստատեսությունը պատկերի, ձայնի, երաժշտության շնորհիվ մոտեցրեց մայրցամաքները, երկրները, ժողովուրդներին: Կապի նոր միջոցը իրար է մերձեցնում մարդկանց: Դա հեռակապի ահռելի հնարավորություն է, որի հեղինակներն ու կազմակերպիչները միտում ունեն ջնջել մարդկանց միջև եղած հեռավորություն, ինֆորմացիոն անջրպետ և այլ արգելքներ և ամեն մեկին կապել համաշխարհային տեղեկատվության հետ:

Հայաստանում ևս կապի նոր համակարգը իր թևերն է տարածում, թեև դանդաղ ու երկչոտ, բայց զարգացում է ապրում: Ծատ մտավորականների այն վախը, որ այդ համամարդկային նվաճումը կարող է դառնալ որևէ մեկի, մի ձեռներեցի, մի պաշտոնյայի մենաշնորհը, այսինքն զարգացումը գնա զուտ «հայկական տարբերակով», անհիմն չէր: Նման փորձի մասին գրել է «Գիտությունը» 1997 թ. № 7-ում:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը օրերս անդրադարձավ ՀՀ ԳԱԱ ինֆորմացիոն ցանցի զարգացման հարցերին և դա խիստ հրատապ էր, քանի, որ ակադեմիական համակարգում աշխատող հազարավոր մարդիկ միջազգային գիտական տեղեկատվության այլ միջոց համարյա չունեն: Նախագահությունը քննարկելով ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ Ցու. Ծուքուրյանի և ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի փոխտնօրեն Վ. Սահակյանի՝ «ՀՀ ԳԱԱ ինֆորմացիոն ցանցի առկա վիճակի և հեռանկարի մասին» զեկուցումը, հաստատեց ՀՀ ԳԱԱ ակադեմիական գիտական հետազոտական կոմպյուտերային ցանցը (ԱԳՀ-ցանց), որպես համակադեմիական ասոցիացիա, որի հիմնական նպատակն է, ստեղծել միասնական ցանցային ինֆորմացիոն տարածություն ՀՀ ԳԱԱ ինստիտուտների, հետազոտողական հիմնարկների համար, ապահովելով ընդրանց ինֆորմացիոն կապը հանրապետության պետական համալսարանների, գիտահետազոտական ինստիտուտների և միջազգային գլոբալ ցանցերի հետ: ԱԳՀ-ցանցի անդամ կարող են լինել նաև գիտական, գիտատեխնիկական գործունեությամբ զբաղվող այլ կազմակերպություններ և անձինք:

Հաստատվեց ՀՀ ԳԱԱ ԱԳՀ-ցանցի հետևյալ կառուցվածքը.

ԱԳՀ-ցանցի կոլեգիա. իրականացնում է ասոցիացիայի ընդհանուր ղեկավարումը, ձևավորում է հեռանկարային խնդիրները և ներկայացնում է ասոցիացիան ՀՀ ԳԱԱ նախագահությունում և հանրապետության պետական կազմակերպություններում: Խորհրդի նախագահն է ՀՀ ԳԱԱ պրեզիդենտը: Խորհրդի կազմի մեջ ընդգրկվում են ԱԳՀ-ցանցի գիտատեխնիկական խորհրդի ղեկավարը, կենտրոնի տնօրենը:

ԱԳՀ-ցանցի գիտատեխնիկական խորհուրդ. իրականացնում է ասոցիացիայի գիտատեխնիկական փորձագիտական գործունեությունը, ցանցի զարգացման տեխնիկական առաջադրանքների մշակումը, նրանց իրականացման համար մասնագիտական խմբերի ձևավորումը, մասնակիցների և արտաքին կապերը իրականացնող կազմակերպությունների հետ պայմանագրերի կազմումն ու իրականացումը: Խումբը կազմակերպում է ցանցը օգտագործողների ուսուցումը և որակավորումը: Խմբի մեջ ընդգրկվում են առնվազն մեկական ներկայացուցիչներ ասոցիացիայի անդամներից: Խմբի ղեկավարն է ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրենը:

ԱԳՀ-ցանցը գործում է տնտհաշվարկային եղանակով:

ԱԳՀ-ցանցի մասնագիտական կենտրոնը (ԱԳՀ ՄԿ)՝ իրականացնում է ցանցի ամենօրյա սպասարկումը և գործունեության ապահովումը:

ԱԳՀ-ցանցում իրականացվում է ասոցիացիայի մեջ ընդգրկված կազմակերպությունների նյութերի նախապատրաստումը և ԱԳՀ-ցանցի ՄԿ միջոցով նրա ներմուծումը ասոցիացիայի ընդհանուր կուտակիչների (սերվերների) վրա: ՀՀ ԳԱԱ ընդհանուր բնույթի ինֆորմացիան նախապատրաստվում է բաժանմունքների, բաժինների միջոցով և ներկայացվում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարի ստորագրությամբ ԱԳՀ ՄԿ ղեկավարին սերվերներում տեղադրելու համար: Ինստիտուտների կողմից ներկայացվող ինֆորմացիայի պատասխանատուն հանդիսանում է տնօրենը: Ինֆորմացիան ներկայացվում է ԱԳՀ ՄԿ տնօրենին, բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի հետ համաձայնեցնելուց հետո: Ներկայացվող նյութերի ծավալին վերաբերող սահմանափակումները որոշում է ԱԳՀ ՄԿ տնօրենը:

Վանա լիճ. Սուրբ Խաչ եկեղեցին. «Օսմանը չի փոխում դեմքը»,— կարդացեք 3-րդ էջում:

Նոր փուլի նախաշեմին

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյան բարձր արդյունավետությունը: Ջրով, սննդատարրերով և օդի օպտիմալ ու մշտական մատակարարման պայմաններում բույսերում տեղի են ունենում ֆիզիոլոգա-անատոմիական և կենսաքիմիական որոշակի փոփոխություններ՝ ուժեղանում է վեգետատիվ աճը, արագանում է զարգացման փուլերի անցումը, ավելանում է ֆոտոսինթեզող գունանյութերի, վիտամինների, եթերայուղերի, ֆիզիոլոգիապես ակտիվ և այլ նյութերի պարունակությունը, բարձրանում է ֆոտոսինթեզի և տրանսպիրացիայի ինտենսիվությունը:

Բազմամյա հետազոտությունների հիման վրա ապացուցված է, որ հիդրոպոնիկական արտադրությունը, հիմնականում ապահովում է բարձրորակ բուսական զանգվածի ստացում, որը ոչ միայն չի գիջում հողային բույսերին, այլ շատ ցուցանիշներով գերազանցում է նրանց, և կամ էլ համապատասխանում է ըստանդարտին: Այս նոր պայմաններում հիդրոպոնիկ բույսերը աչքի են ընկնում բարձր արդյունավետությամբ, սովորական երկրագործության համեմատությամբ միավոր մակերեսից 3—5 անգամ ավելանում է նրանց բերքատվությունը, զգալիորեն (40—50 տոկոս) կրճատվում է ջրի և աշխատանքի ծախսերը մեկ տոննա բերքի համար, ավելանում է արևի էներգիայի օգտագործման օգգ-ն, իսպառ վերանում են ծանր և աշխատատար մի շարք աշխատանքներ: Գյուղատնտեսական մեքենաների փոխարեն այստեղ աշխատում են էլեկտրապոմպեր, ավտոմատ գործող սարքեր, լուծույթախողովակներ:

Հիդրոպոնիկումների ստեղծումը պահանջում է սկզբնական կապիտալ մեծ ներդրումներ, ուստի առավել նպատակահարմար է բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում կազմակերպել առաջին հերթին թանկարժեք մշակաբույսերի արտադրություն (եթերայուղատու, դեղատու, ներկատու և այլն), որոնք զբաղեցնելով համեմատաբար փոքր տարածքներ, կարող են մեծ արդյունք տալ:

Այս տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում թանկարժեք եթերայուղատու մշակաբույս վարդաբույր խորդենու անհող աճեցման փորձերը, որոնք առաջին անգամ, 1965 թվից սկսած, տարվել են ինստիտուտում: Շնորհիվ Հայաստանի բնակլիմայական պայմաններում վարդաբույր խորդենու բարձր արդյունավետության և եթերայուղի լավորակության, այս թանկարժեք տեխնիկական բույսը ձեռք էր բերել մեծ նշանակություն հանրապետության գյուղատնտեսական մշակաբույսերի ընդհանուր հաշվեկշռում:

Ինստիտուտը մշակել է առաջարկություն՝ «Վարդաբույր խորդենու հիդրոպոնիկ արտադրության և անթափոն վերամշակման արդյունաբերական համալիրի ստեղծման վերաբերյալ»: 1971 թ. հուլիսին հանրապետության նախարարների խորհուրդը հավանություն տվեց կատարված աշխատանքներին, ընդունեց Հայաստանի ԳԱ նախագահության առաջարկությունը և որոշեց (թիվ 459) Էջմիածնի շրջանի գյուղատնտեսական արտադրության համար ոչ պիտանի (աղուտ) հողատարածքների վրա (7 հա) ստեղծել բացօթյա հիդրոպոնիկ տեղակայանք, որի առաջին հերթը շարք մտավ 1976 թ., իսկ երկրորդը՝ 1983 թ.:

Հայաստանում տնտեսապես շահութաբեր օծանելիքային արդյունաբերության ստեղծման կապակցությամբ անհրաժեշտություն ծագեց վարդաբույր խորդենու հետ մեկտեղ հետազոտել նաև մեր հանրապետության համար նոր եթերայուղատու բույսերի անհող արտադրության հնարավորությունները և արդյունավետությունը:

Այդ բազմամյա հետազոտությունները հաստատեցին, որ էվգենոլային և բուրումնավետ ռեհանի, կիտրոնային սորգոյի, դաղձի, կատվադաղձի, օշինդրի, վեսփվերիայի, անիսոնի, խորամսամիթի արդյունավետությունը անհող մշակույթի պայմաններում, միավոր մակերեսից, բարձրանում է 3—6 անգամ, ստացված եթերայուղերը իրենց որակական ցուցանիշներով ոչ միայն չեն գիջում հողային մշակույթին, այլև հիմնական քիմիական բաղադրատարրերի պարունակությամբ գերազանցում են: 1970-ական թվերից սկսած, հետազոտվել է նաև ծիսախոտի, մի շարք դեղաբույսերի (պճղավոր մորմ, ալոե, կակաչ, վալերիանա, վարդագույն կատարանտուս, փետրավոր կալանխոե, երիկամային թեյ) հիդրոպոնիկ մշակման արդյունավետությունը: Հաստատված է բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում այդ բույսերի ինտենսիվ աճը, զարգացումը և բարձր արդյունավետությունը: Պարզվել է, որ դեղորայքային հումքի բերքի ավելացմանը հրհշակիորեն նպաստում է նաև Արարատյան դաշտի խիստ կոնտինենտալ կլիման:

Վերջին տարիներին մշակված են մի շարք արժեքավոր ներկատու (հինա և բասմա), ծառաթփային, ծաղկային և դեկորատիվ բույսերի, վիրուսազերծ կարտոֆիլի միկրոկլոնալ և հիդրոպոնիկ համակցված արտադրության ժամանակակից կենսատեխնոլոգիաներ, որոնք հնարավորություն են տալիս տարեկան մեկ անհատից ստանալ 10^8—10^9 քանակի բույսակներ:

1988 թ. սկսված են մի շարք արժեքավոր ու հազվադեպ դեղաբույսերի Հայաստան ինտրոդուցելու (ներմուծելու), հիդրոպոնիկ աճեցման և ուսումնասիրման լայնածավալ աշխատանքներ: Ստեղծվում է այդ թանկարժեք դեղաբույսերի բանկ:

Անհրաժեշտ է նշել, որ դեղաբույսերի, եթերայուղատու և ներկատու մշակաբույսերի անհող աճեցման, դրանց հիդրոպոնիկ արտադրության կենսատեխնոլոգիաների մշակման ու ֆիզիոլոգա-կենսաքիմիական առանձնահատկությունների ուսումնասիրման ասպարեզում մեր ինստիտուտը եղել և այսօր էլ մնում է առաջատարը աշխարհում:

Լուրջ հաջողություն պետք է համարել այն, որ բույսերի անհող արտադրության համար, վերջին տարիներս, մշակված է սկզբունքային նոր համակարգ՝ պոլիմերային թաղանթի օգտագործմամբ «ջրաշիթային հիդրոպոնիկա», «ջրաշիթա-գլանային» և «ջրաշիթա-ակոսային» տարբերակներով, որոնք, առնվազն, 5—6 անգամ էժան են գոյություն ունեցող դասական հիդրոպոնիկ համակարգի համեմատությամբ:

Հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ ագրոքիմիական պրոբլեմների և հիդրոպոնիկայի ինստիտուտի առաջատար դերը հիդրոպոնիկայի զարգացման ապարեզում և նրա մեծ նշանակությունը հանրապետության ժողովրդական տնտեսության համար, ՀՀ ԳԱԱ նախագահության որոշմամբ 1995 թվականին այն վերանվանվեց ՀՀ ԳԱԱ հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի:

Բույսերի անհող մշակույթի քնագավառում նախատեսվում է ֆիզիոլոգիական, կենսաքիմիական, ագրոքիմիական և կենսաֆիզիկական խոր և բազմակողմանի հետազոտությունների մեծ ծրագիր, ինչպես նաև ինժեներա-կոնստրուկտորական մշակումներ՝ արդյունաբերական բուսաբուծության այս նոր ճյուղի գիտական հիմունքների մշակման և այդ կենսատեխնոլոգիայի առավել կատարելագործման ու էժանացման համար: Ծրագրված է հետազոտել և պարզաբանել բույսերի բարձր արդյունավետության բոլոր գործոնների օպտիմալ պարամետրերը, ինչպես նաև մշակել հանքային սննդառության, ֆոտոսինթետիկ գործունեության և բույսերի կարգավորվող կենսասինթեզի համալիր օպտիմալացման համակարգ, որը թույլ կտա աստիճանաբար անցնելու բույսերի արդյունավետության ծրագրավորմանը և մաթեմատիկական մոդելավորմանը: Դա կհանդիսանա հիդրոպոնիկայի զարգացման նոր փուլը, նրա վաղվա օրը:



Բացօթյա հիդրոպոնիկ պլանտացիայից մի հատված:

Ս. ՄԱՑՐԱՊԵՏՅԱՆ
Ակադեմիկոս Գ. Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի տնօրեն, գիտությունների դոկտոր, Հիդրոպոնիկայի միջազգային միության իսկական անդամ

Այսքան շատ «շա՞տ»

Երբ որևէ քանակություն գերազանցում է անհրաժեշտ չափը, անցնում է բավական կոչվող սահմանը, ավելին է, քան մեր սպասելիքները, տրամաբանորեն գործածում ենք չափ ու քանակ ցույց տվող «շատ» բառը: Ամեն ինչ լավ է, եթե տեղին է, չափավոր: Գերադրական գնահատականի ու որակման, խոսքին փայլ տալու համար շարունակ «շատ» բառին դիմելը իրականում ոչ միայն խանգարում է մեր ընկալմանը, այլև ծանրաբեռնելով նախադասությունը՝ առաջ է բերում լեզվական ավելորդության տպավորություն: Իսկ այս չարաշահումը նկատելի է և, կարծես, ավելի ու ավելի է տարածվում: Թվում է՝ քիչ կլինի, եթե ասենք՝ մեծ, հետաքրքիր, գեղեցիկ, խելոք... Անհրաժեշտ է՝ **շատ մեծ, շատ հետաքրքիր, շատ գեղեցիկ, շատ խելոք...** Կամ. ոչ թե՝ ուրախ եմ, ցավում եմ, համոզված եմ, երկակայում է, խորթ է, անհասանելի է, այլ՝ շատ ուրախ եմ, շատ ցավում եմ, շատ համոզված եմ, շատ է երևակայում, շատ խորթ է, շատ անհասանելի է... և այսպես շարունակ: Իհարկե, խոսքը այն մասին չէ, որ նշված հատկանիշները, ինչ-ինչ դեպքերում, իրոք, կարող են արտակարգ լինել, այլ երբ անտեղի, խոսողի ցանկությամբ են այդպիսիք դառնում: Մենք կդիմենք վերջին երեք տարում մտավորականների՝ ռադիոյով կամ հեռուստատեսությամբ հանախ հնչած խոսքին, պաշտոնական այլ կարգի ելույթներին՝ ցույց տալու համար այն բազմաթիվ դեպքերից մի քանիսը, երբ «շատ» բառի գործածությունը հանձնարարելի չէ: Ահա, խոսելով ավտոսպորտի ցանկալի զարգացման մասին, մարզական գործիչը համոզված հայտնում է, թե Հայաստանում «ֆեդերացիան կունենա շատ մեծ ապագա»: Լրագրողը, արտահայտելով իր հիացմունքը մի կառույցի մասին, ասում է. «Դա շատ մոնումենտալ կառույց էր, շատ մոնումենտալ էր»: Մի տնօրեն արտահայտում է իր դրական վերաբերմունքը ռադիոհաղորդման ընկատմամբ. «Ուրախ եմ, որ ձեր հաղորդմանը ծանոթացա, ես շատ ողջունում եմ այն»: Ինչ խոսք, որ մեջբերված նախադասություններում բավական կլիներ ասել միայն. «կունենա մեծ ապագա», «մոնումենտալ կառույց էր», «ես ողջունում եմ այն»: Ինչպես կտեսնենք, այսպիսի նախադասությունները լեզվական սայթաքումներ չեն, այլ խոսքը կառուցելու որոշակի միտումի հետևանք:

«Գրական թերթ»-ի ս.թ. № 17-ի «Բանական է «բավականը» և նրա երեք հոմանիշները» մեր հոդվածում ցույց էինք տվել, որ բավական, բավականաչափ, բավականին, բավականի հոմանիշները վերածվում են լեզվական մոլախոտի, երբ անվերջ ու անտեղի գործածվում են հիշատակվող հատկանիշից առաջ՝ բավական մեծ հաջողություն, բավականաչափ քիչ ժամանակ, բավականին անխախտ բարեկամություն, բավականին զգալի առաջադիմություն... Այժմ պատկերացրեք, որ նշված հոմանիշները և «շատ» բառը շարունակ հանդիպում են իրար մինչև նախադասությունների մեջ: Խոսողը նախ ասում է՝ բավական (կամ մյուս հոմանիշները), ապա, կարծես երկյուղելով, թե դա քիչ կլինի, տալիս է նաև «շատ» զգեահատականը: «Լսեցինք զեկուցումը, որ, իրոք, բավականին շատ հետաքրքիր էր... «Պետք է ասեմ, որ այդ երկու օրում բավականին մեծ, շատ մեծ արձագանք ունեցավ»: Այստեղից հաջորդ անցումը, այլևս գնահատականը փոխելու հարկ չկա, ավելի կարճ են ուղղակի՝ «շատ բավականին» կամ «բավականին շատ» ձևակերպումները: Ինչպես. «Արմենը բավականին շատ երաժշտական ընտանիքից է» (մի երաժիշտ): «Քննարկումները բավականին շատ լայն էին (մի հասարակական գործիչ): «Նրա ոճը բավականին շատ երկար նստած է իմ մեջ» (մի երգչուհի): «Երկու տարին դա շատ բավականին մեծ ժամանակաշրջան է» (մի բժշկուհի): Նշենք, որ ձայնային հնչերանգը նույնպես ցույց է տալիս, թե «բավականը» և «շատ» «շատ»-ը որոշիչներ էին, ու դրանց միջև ստորակետին հատուկ դադարը չկար: Ուրեմն՝ հիմա ինչպե՞ս. իրականում ո՞րն է: Մեջբերված նախադասությունները հիշեցնում են այն մարդու պատասխանները, որը, չիմանալով տրված հարցին ինչ պատասխան տալ, նախ ասում է՝ այո, հետո՝ ոչ, իսկ վերջում, այնուամենայնիվ չկողմնորոշվելով, թե որն է ճիշտ, ասում է՝ այո ոչ: Այստեղ մենք մտովի կարող ենք պահել «շատ» կամ «բավականին» և կամ չը-պահել ոչ մեկը, ոչ մյուսը:

Այժմ անցնենք մեկ այլ դեպքի: Խոսողին քիչ է թվում մեծաթիվ լինելու հանգամանքը նշել միայն «շատ»-ով, որն առանց այդ էլ ավելորդ է, կամ կրկնում է այն, կամ միաժամանակ գործածում որևէ հոմանիշ, առավել հանախ՝ «բազմաթիվ» բառը: Բուհի աշխատակիցն ուզում է ընդգծել իրենց կապերը և ասում է. «Մեր համալսարանի կապերը շատ բազմաթիվ են»: Ըստ որում, այս և մյուս օրինակներում դարձյալ չկա ստորակետին հատուկ հնչերանգը: Երգիչը՝ իրենց խմբի երգացանկի մեծությունը. «Ունենք միջնադարյան, ժողովրդական, գուսանական երգեր՝ շատ բազմաթիվ»: Թանգարանի աշխատակիցը բարի դիտավորությամբ՝ նկարչի տաղանդավորությունը. «Ներկայացնում ենք մեր շատ տաղանդաշատ նկարիչ ... նկարները»: Կրկեսի աշխատակցի տրված խոստումները. «Համենայն դեպս, խոստումները բավականին շատ շատ են»:

Եվ այսպես. շատասիրությունը թափընթացով առաջ է գնում, ծավալվում, և «շատ»-ն էլ սկսում է հանդիպել այնպիսի խոսքաշարերում, որտեղ ոչ միայն ավելորդ է, այլև բացահայտորեն անիմաստ: Ինչպե՞ս կարող է եզակին շատ լինել: Եզակին նրանով է եզակի, որ միակն է, մեկն է: Մինչդեռ, լսում ենք. «Մեր այս դեպքը շատ եզակի է, ինքը կամավոր է գնացել» (մի հասարակական կին գործիչ): «Բանասիրական ֆակուլտետը այն շատ եզակի ֆակուլտետներից է...» (մի լրագրուհի): Մոռացվել են՝ հազվագյուտ, հազվադեպ, սակավադեպ, բացառիկ և մերձիմաստ այլ բառեր, որոնք ինքնին փոխարինում են «շատ եզակի» բառակապակցությանը (դեպքը բացառիկ է», «հազվագյուտ ֆակուլտետներից է»). իսկ եթե «եզակի»-ն գործածելը ցանկալի է, ուրեմն առանց «շատ»-ի՝ դեպքը եզակի է, «եզակի ֆակուլտետներից է»: «Անբաժան»-ը շատ կամ քիչ լինել չի կարող. անբաժանը անբաժան է: Բայց խոսելով դերասաններ Աշոտ Եղիազարյանի և Լևոն Մելոյանի համագործակցության մասին՝ լրագրուհին ասում է. «Լևոն, դուք միշտ շատ անբաժան եք, միասին»: Եթե մի բան անջնջելի է, ուրեմն՝ անջնջելի է, «շատ» կամ «քիչ» ասելն այստեղ չի պահանջվում: «Շատ անջնջելի էր Օդայի ֆինալը» (մի ռեժիսոր): Թվում է՝ տեղին կլիներ «տպավորիչ» ածականը:

Ունենք «քիչ», որից՝ «շատ քիչ». վերջինը այլ կերպ կոչում ենք՝ «չնչին»: Սա ծայրահմանն է, որն այլևս կարիք չկա էլ ավելի ընդգծելու՝ դիմելով «շատ» բառին: Մինչդեռ համատարած լսում ենք. «շատ չնչին», մանավանդ, երբ խոսքը գումարների կամ ինչ-որ բանի քանակության մասին է: «Բացի այդ, որ գումարները շատ չնչին են...» (մի կինոգործիչ), «Տրամադրած գումարները շատ չնչին գումարներ են, որոնցով հնարավոր չէ աշխատանքները կատարել» (սանէպիդկայանի աշխատակից), «Իհարկե, նավթի այդ քանակը շատ չնչին է» (մի լրագրուհի): Նույն կերպ ունենք «մեծ», որից՝ «շատ մեծ», «վիթխարի», «հսկա»: Վերջին երկուսը այն շատ մեծը է արդեն, և որիշ «շատ» չի պահանջում, ինչպես հետևյալ օրինակում. «Մենք հիմա սկսել ենք շատ վիթխարի աշխատանքներ» (մի գերատեսչության աշխատակից):

Ահա այս կերպ ածականները ու մակբայները առանց «շատ» վերադրի իմաստային առումով համատարած թվում են թույլ ու խամրած: Բանը հասել է այնպիսի բառերի, որոնցով արտահայտում ենք մեր գերադրական վերաբերմունքը առարկաների, երևույթների, գործողությունների ընկատմամբ՝ հիանալի, հրաշալի, հոյակապ... Սովորության ուժը թույլ չի տալիս զգալու, որ տարօրինակ են հնչում՝ «շատ հիանալի», «շատ հրաշալի», «շատ հոյակապ»..... Երբ որևէ բան արժանի ենք համարում հիացմունքի, հավանաբեղնում ենք հրաշքի, դրանով ադեն ասում ենք ամեն ինչ, տալիս որակման ամենաբարձր աստիճանը: «Շատ» ավելացնելը փչացնում է տպավորությունը: «Տրադիցիա է դարձել հոկտեմբերին անցկացնել բերքի տոն: Շատ հիանալի տոն է» (մի ղեկավար աշխատող): «Նա շատ հիանալի է կատարում իր աշխատանքը» (մի երգչուհի): «Այսօր մենք հավաքվել ենք մի շատ հրաշալի առիթով: Ես չեմ կարող չասել մի շատ հրաշալի խոսք» (մի բանաստեղծ): «Իմ մայրը շատ հրաշալի կարդում էր» (մի դերասանուհի): Ցանկությունը բարի է, տալ ամենաբարձր գնահատականները, բայց դուրս է գալիս յուրօրինակ կրկնություն, տուժում է խոսքի մշակույթը: Ահա երաժիշտ-գործիքավորողը հաղորդման ընթացքում պատմում է իրեն սիրելի բաների մասին՝ ամեն ինչ անվանելով՝ «շատ հոյակապ»: Բազմաթիվ անգամներից հիշենք չորսը. «Շատ հոյակապ պարախումբ, շատ հոյակապ հովանավորող, շատ հոյակապ հաղորդում, համերգը անցավ շատ հոյակապ»: Եվ կամ՝ «հիասքանչ», «չքնաղ»... Մի՞թե այս ածականները բավարար չափով գեղեցիկ, բանաստեղծական չեն: Բայց արի ու տես, որ 5-րդ կուրսի ուսանողուհին, մեկ այլ դեպքում, խոսելով Մերձավոր Արևելքից ստացած տպավորությունների մասին՝ ձգտում է ավելի բարձր որակում տալ. «Արարները ունեն շատ հիասքանչ գրականություն»: Գերադրական ծայրագույն որակում կամ խիստ ընդգծված վերաբերմունք արտահայտելու ցանկությունը հանգեցրել է այն բանին, որ «շատ»-ը սկսել ենք գործածել գերադրական աստիճանի ածականների հետ՝ դժվարագույն, լավագույն, ընդվազագույն... Բայց չէ՞ որ «դժվարագույն»-ը ծայրաստիճան դժվարն է, «լավագույն»-ը՝ լավերի մեջ ամենալավը, «ընդվազագույն»-ը՝ առավելագույն չափի նվազը: Եթե ասում ենք՝ «շատ դժվարագույն», «շատ լավագույն», «շատ նվազագույն», կարո՞ղ ենք ասել նաև՝ «քիչ դժվարագույն», «քիչ լավագույն», «քիչ նվազագույն»:

Խիստ տարածված է «շատ կարևորագույն» բառակապակցությունը: Առաջ քաշված հարցը, բարձրացրած խնդիրը, քննարկվող օրենքը, ընդունված որոշումը քիչ ենք համարում անվանել կարևորագույն, այլ՝ շատ կարևորագույն: Հանդես է գալիս հասարակական գործիչը. ելույթը տևում է մոտ տասը րոպե, և երեք անգամ լսում ենք՝ «շատ կարևորագույն»: «Հիմք է դրվում շատ կարևորագույն մի երևույթի... Շատ կարևորագույն հարց է իմ համար... կապված այս շատ կարևորագույն օրենքի ստեղծման հետ»: Մինչդեռ անհրաժեշտ էր պարզապես՝ կարևորագույն երևույթ, կարևորագույն հարց, կարևորագույն օրենք:

Եվ այսպես, այն հանգամանքը, թե ինչպես ենք խոսում, ինչպես ենք արտահայտում մեր մտքերը, կարևոր նշանակություն ունի փոխհասկացողության համար: Մենք կանգ առանք մեկ խանգարիչ միտումի վրա: Ամփոփելով ասենք, որ «շատ» բառի գործածությունը անհարկի է դառնում, եթե նախադասության մեջ առարկաները, երևույթները, գործողությունները արդեն իսկ ճշգրիտ որակող բառեր կան: Իմաստային առումով, բժշկական բառերով ասած, հակացուցված է «շատ»-ի գործածությունը իր իսկ հոմանիշների, գերադրական վերաբերմունք ցույց տվող բառերի (հիասքանչ, հրաշալի, չքնաղ), գերադրական աստիճանի ածականների հետ: Գեղեցիկ ու դյուրընթեռնելի խոսքը առանց ավելորդությունների, անպաճույճ խոսքն է:

Երջանիկ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Բանասիրության դոկտոր

Զորավարը՝ պարզ ու բարի մարդը

Տարիներ առաջ, երբ ես աշխատում էի Հայաստանի Հեղափոխության թանգարանում, ինձ բախտ վիճակվեց հանդիպել և անձամբ ծանոթանալ Խորհրդային Միության կրկնակի հերոս, մարշալ Հովհաննես Բաղրամյանի հետ:

Ինձ հանձնարարվեց տեսակցել մարշալ Հովհաննես Բաղրամյանին և հնարավորության սահմաններում ընդունից ստանալ մեզ հետաքրքրող նյութեր և անձնական իրեր: Այդ առիթով ես մեկնեցի Մոսկվա:

1959 թվականի ամռանն էր: Բաղրամյանը այդ ժամանակ աշխատում էր ԽՍՀՄ-ի պաշտպանության նախարարությունում թիկունքի ծառայության գծով նախարարի տեղակալ: Նախարարության շենքը գտնվում էր Ֆրունզեի առափնյայի մոտ: Ես, իհարկե, բազմիցս եղել էի Մոսկվայում, բայց և այնպես երիտասարդ մի աղջկա համար այն չափազանց պատասխանատու և ծանր հանձնարարություն էր: Այնուամենայնիվ, երկար որոնումներից հետո, ինձ հաջողվեց հեռախոսային խոսակցություն ունենալ մարշալի հետ, որը խոստացավ առաջիկայում ինձ ընդունել: Պայմանավորված ժամին ես ներկայացա: Բաղրամյանի ընդունարանը լեփ-լեցուն էր բարձրաստիճան զինվորականներով: Երբ համարանը բացեց դուռը, իմ հայացքի առաջ բացվեց փառահեղ մի տեսարան, ընդարձակ մի աշխատասենյակ՝ հատուկ «զինվորական» կահավորումով: Սրահի ծայրից արագ քայլերով դեպի ինձ էր գալիս մարշալը: Ես մի պահ շփոթվեցի, կարմրեցի, մոռանալով ամենիքս: Բաղրամյանը ուրախ, ժպտալով բարևեց ինձ, սեղմեց ձեռքս ու հարցրեց. «Հայ աղջի՞կ ես, Երևանի՞ց ես եկել, դե պատմիր»: Ես ընդրան մեխանիկորեն պատասխանեցի ռուսերեն: Նա ինձ ընդհատեց և մի փոքր-ինչ ձայնը բարձրացնելով ասաց. «Դու հայ աղջիկ ես, ինչո՞ւ հայերեն չես խոսում»: Ես սթափվեցի, դիտողությունը միանգամայն տեղին էր: Առաջին անգամ ես զգացի, թե Բաղրամյանը ինչպիսի մեծ հայրենասեր էր, որքան խոր արմատներով էր կապված իր ազգի, իր ժողովրդի հետ:

... Երեկոյան մենք հանդիպեցինք տանը:

Բաղրամյանը բացեց պահարանը, այնտեղից հանեց արխիվային նյութերի մի մեծ հավաքածու և առաջարկեց առանձնացնել հարկավորը: Ես անմիջապես ձեռնամուխ եղա այդ գործին: Սակայն թանգարանի ցուցադրության համար անհրաժեշտ էր վերցնել ընդրան պատկանող անձնական իրերը: Բաղրամյանը թանգարանին նվիրեց երկու թուր, ատրճանակ, իր մարշալական համազգեստը և այլն: Աշխատասենյակից դուրս գալուց, ես նկատեցի, որ նրա թոռնիկը մեկ ուրիշ երեխայի հետ խաղում էր: Նրանք ձեռքով պահում էին թնդանոթի մի գեղեցիկ մանրակերտ: Այն իմ մոտ հետաքրքրություն առաջացրեց: Պարզվեց, որ այն իրեն նվիրել են Մերձբալթյան 1-ին ռազմաճակատում, որի գլխավոր հրամանատարն էր նա պատերազմի ժամանակ: Ես վերցրեցի երեխայի մոտից, քանի որ այն չափազանց արժեքավոր ցուցանմուշ էր:

Մի քանի տարի անց, 1967 թվականին, Բաղրամյանը ժամանեց Երևան և այցելեց Հեղափոխության թանգարան: Նա ինձ հիշեց, հարցրեց, թե ինչպես են ընթանում գործերը թանգարանում: Ես սիրով ցույց տվեցի նրան հատկացված բաժինը, ուր խնամքով ցուցադրված էին իր ընծայած իրերը: Մարշալը գոհ էր, նա հետաքրքրությամբ էր դիտում յուրաքանչյուր ցուցանմուշ, ասես առաջին անգամ էր տեսնում: Ի վերջո թանգարանի տնօրինությունը և կոլեկտիվը ցանկություն հայտնեցին լուսանկարվել մեծ զորահրամանատարի հետ: Բաղրամյանը սիրով ընդունեց այդ ցանկությունը:

Անցան տարիներ. բնության անխուսափելի օրենքին ենթակա Բաղրամյանն էլ հրաժեշտ տվեց աշխարհին...

Հիմա, երբ հետդարձ ակնարկիս դիմաց պահում եմ իմ անցած օրերը, հատուկենտ լուսավոր օղակներ եմ տեսնում, որոնք երանությամբ են լցնում էությունս: Թերևս ամենալուսավորը՝ Մեծ զորավարի ու Մեծ հայի՝ Բաղրամյանի հետ իմ հանդիպումների ժամանակ են եղել: Այդ օրերին ես ճանաչեցի նրան որպես պարզ ու բարի մի մարդու:

Լիլյա ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի առաջատար գիտական աշխատող, փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Փախստականներ՝ մեր կողքին

Փախստականության հիմնահարցը, ձևավորվելով Արցախյան շարժման առաջին փուլում (Սումգայիթի հայտնի իրադարձությունները և դրանց հաջորդող զանգվածային տեղահանությունները Ադրբեջանի տարբեր բնակավայրերից), այսօր էլ Հայաստանի Հանրապետության առջև ծառացած կարևորագույն խնդիրներից է:

Փախստականների բավականին մեծ զանգվածը, տնտեսական ճգնաժամը, արտաքին քաղաքական անբարենպաստ հանգամանքները, ինչպես նաև 1988 թ. դեկտեմբերյան երկրաշարժի պատճառով Հայաստանի բնակարանային ֆոնդի զգալի մասի ավերումը, էական դժվարություններ են ընտեղծում ինչպես փախստականների տեղաբաշխման, այնպես էլ նրանց աշխատատեղերով ապահովելու նանապարհին: Ընդհանուր առմամբ փախստականության հիմնահարցին առնչվել են նախկին ԽՍՀՄ-ի հանրապետությունները, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների ավելի քան կեսը: Չեչենական պատերազմը և արդյունքում ռուս փախստականության հոսքը այլ սուբյեկտներ էական դժվարությունների առաջ են կանգնեցրել նույնիսկ այնպիսի հզոր տերության, ինչպիսին Ռուսաստանն է: Ավելին, Եվրոպայում հակամարտության տարբեր օջախների առկայությունը ընդմանատիպ խնդիրներ է ձևավորում նաև եվրոպական բազմաթիվ տերություններում, հանախ վերջիններիս պարտադրելով հարցի լուծումը փընտրել օրենսդրական որոշումներում:

Ըստ վիճակագրության, արդեն 1990 թ. ԽՍՀՄ-ում կար բնակության վայրը հարկադրաբար լքած մոտավորապես 600 հազար մարդ, որից Ադրբեջանից հեռացածները, ճնշող մեծամասնությամբ հայերը, կազմում էին 308,6 հազար, Հայաստանից հեռացած ադրբեջանցիները՝ 172,8 հազար: 1994 թ. հուլիսի դրությամբ, փախստականների հարցերի հանձնաժողովի հաշվարկներով, մոտ 300 հազար փախստական է եկել Հայաստան՝ սկսած 1988 թ. մարտից: 1993 թ. Միացյալ ազգերի Կազմակերպության մարդասիրական զարգացման զեկույցը (ՄԶԶ) Հայաստանի համար նշել է, որ 350 հազար հայ փախստական են մուտք գործել երկիր:

Փախստականության վիճակը լավագույն պատկերացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել մեկ կարևոր հանգամանք. Հայաստանից հեռացած ադրբեջանցիներն օգտվելով կենտրոնի՝ ԽՍՀՄ ղեկավարության ընձեռած հնարավորություններից, կարողացան բավականին կարճ ժամանակում լուծել բնակարանների փոխանակության, վաճառքի, ունեցվածքի տեղափոխության հետ կապված հիմնական հարցերը, փոխանակությամբ կամ վաճառքի արդյունքում հանախ հայտնվելով ավելի բարենպաստ պայմաններում, գյուղական վայրերում ունեցած բնակարանները փոխանակելով Ադրբեջանի արդյունաբերական կենտրոններում հայերի ունեցած բնակարանների հետ, կամ պարզապես զբաղեցնելով հայերի լքած բնակարանները:

Բոլորովին այլ է Ադրբեջանից հեռացած հայերի վիճակը՝ նրանց մեծ մասը հեռացել է առանց ոչնչի, թողնելով տարիների տքնաջան աշխատանքի արդյունքը: Բնական է, որ Հայաստանում դիմակայելով նույն զրկանքներին, ինչ որ տեղի բնակչությունը, փախստականները կրում էին նաև լրացուցիչ դժվարություններ՝ զուրկ լինելով սեփական օթևանից, աշխատանքից, բնակարանից, գույքից, ինչպես նաև ինքնագնահատականի, ինքնավստահության զգացողությունից: Ինչպես ասում է հոգեբանությունը, մարդու համար ամենադժվարը ինքնասիրությունն է: Ինչպես ասում է հոգեբանությունը, մարդու համար ամենադժվարը ինքնասիրությունն է:

Խազերը կբացե՞ն գաղտնիքը

Միջնադարում մի շարք ժողովուրդներ, ինչպես և հայերը, ունեցել են երաժշտական գրության (նոտագրության) իրենց հատուկ համակարգերը։ Մեղեդու ընթացքը գրի է առնվել հատուկ նշանների՝ Նմաների միջոցով, դրանք կոչվել են անմայնի նոտագրության համակարգեր, որոնք զարգացել են՝ գնալով պարզից դեպի բարդերը։ Նմայնի ձայնագրություններ պարունակող ձեռագրերում ամփոփված են տվյալ ժողովրդի հոգևոր և աշխարհիկ երաժշտության բազմաթիվ գանձեր։

Հայկական միջնադարյան երաժշտության գրության նշանները կոչվել են ԽԱԶԵՐ։ Դժբախտաբար, հայկական և ոչ մի ձեռագրում մեզ չեն հասել խազերի՝ երաժշտական նշանների շատ թե քիչ մեկնելի բացատրություններ և մինչև օրս, ըստ էության, անմատչելի են մնում միջնադարյան երաժշտական բազմաթիվ գանձեր։ Միջնադարի և ոչ մի հեղինակի չի մտահոգել խազերի մեկնության պարագան, որովհետև այդ ժամանակներում (գոնե սկզբնական փուլում) խազային նոտագրությունը այն աստիճան տարածված, հասկանալի և գործնական էր երաժիշտների համար, որ որևէ մեկնության կարիք չկար։ Ճիշտ այնպես, ինչպես այսօր, հանրահայտ է եվրոպական նոտագրությունը, որից օգտվում է երաժշտական ամբողջ աշխարհը։ 16-րդ դարից սկսած, հայկական միջնադարյան նոտագրության համակարգը՝ խազային ձայնագրությունը, անկում է ապրում, գնալով պակասում է ձայնագրված երաժշտությունը կարդալ իմացողների թիվը, աստիճանաբար կորչում, անհետանում են այդ ասպարեզում ժամանակին ձեռք բերված նվաճումները։ Արդեն 18-րդ դարում «խազերի արվեստը» հատուկ քննության նյութ է դառնում՝ զուտ նրա գաղտնիքները բացահայտելու իմաստով։ Չունենալով խազերի մեկնության որևէ ուղեցույց, բացի այն ձեռագրերից, որտեղ առկա է խազերով գրանցված երաժշտությունը։ Հայ երաժշտագետները փորձել են, իրենց հնարավորությունների սահմաններում, բացատրել-մեկնաբանել հայկական խազերի երաժշտական էությունը։ Կոմիտասից առաջ խազագիտությամբ առաջինը հայ իրականության մեջ զբաղվել է Գրիգոր Գապասաքալյանը (1790—1868 թթ.), որը ժամանակին հրատարակել է չորս գրքույկ, որոնցից «Գիրք երաժշտական յորում պարունակեն հարցմունք և պատասխանությունք համառոտաբար»-ը զուտ երաժշտական տեսական աշխատություն է, ուր հեղինակը տալիս է ամեն մի խազի նշանակությունը թե «քանակական» (քանի հնչյուն ունի յուրաքանչյուրը), և թե «որակական» (ինչպիսի հնչյուն ունի)։ Գապասաքալյանի գրքի չափազանց խորին լեզուն և նյութի շատ բարդ շարադրանքը դեռևս մասնագետներին թույլ չեն տալիս սպառիչ պատասխան տալ, թե ինչ չափով է նա բացահայտել հին խազերի էությունը։ Երաժշտագետ Նիկողայոս Թահմիզյանի բնութագրմամբ. «Բուն խնդիրը՝ խազանշանակներին բարձրության ու ձայնամիջոցային հարաբերության արժեքներ հատկացնելու միտումն է, որը թեև այնպես էլ դուրս չի գալիս փորձի շրջանակներից, սակայն ունի պատմա-մշակութային որոշակի նշանակություն»։ Չնայած Գապասաքալյանին չի հաջողվել վերծանել հայոց հին խազերի ամբողջականությունը և ստեղծել խազաբանության որոշակի համակարգ, սակայն նա անվիճելիորեն համարվում է արդի հայ խազագիտության հիմնադիրը։

Հաջորդ հայ երաժշտագետը, որը փորձել է գիտականորեն վերլուծության ենթարկել հայկական խազերի նշանակությունը, դա Եղիա Տընտեսյանն է (1834—1881 թթ.), որը թողել է երաժշտագիտական մի շարք աշխատություններ՝ «Նկարագիր երգոց», «Ազգային երաժշտություն» և հատկապես «Տեսության Շարականի երգոց խազերուն», որոնցում հեղինակը քննության է առել խազաբանության մի քանի հարցեր։

Երուսաղեմում գտնվող մի ձեռագրից բերված տվյալներով Տնտեսյանը ճշտում է, որ բ-նշումը նշանակում է՝ բարձր, դ-ն՝ դարձ, զ-ն՝ զարկ, թ-ն՝ թանձր, ը-ն՝ լայն, ծ-ն՝ ծանր, կ-ն՝ կամաց, յ-ն՝ յետ ձգե, շ-ն՝ շատ, պ-ն՝ պինդ, ս-ն՝ սրե, վ-ն՝ վերցո, ց-ն՝ ցածր, ք-ն՝ քաշ։ Տնտեսյանը իր ուսումնասիրության արդյունքները հրապարակել է մամուլում, որից օգտվել են հետագա հետազոտողները, այդ թվում և Կոմիտասը։

Արևմտաեվրոպական երաժշտագետներից խազային նոտագրության հարցերով զբաղվել են մի շարք հեղինակներ, սակայն նրանց աշխատանքները, երաժշտագետ Ռ. Աթայանի բնորոշմամբ, համարյա առանց բացառության, հետազոտական բնույթ չեն կրում։ Դրանցից, այնուամենայնիվ, ուշադրության արժանի են Շրեդերի, Վիյո

Բաժանորդագրություն «ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»



Վրաց պատմաբան, վերջին թագաժառանգ Դավիթը 1805 թվ. Սանկտ-Պետերբուրգում ռուսերեն հրատարակել է «Վրաստանի համառոտ պատմությունը», որը պատմում է նաև Հայաստանի և հայ արքայազնների Վրաստանում գահակալելու մասին:

ԳՐՔԻ ԼՐԻՎ ՏՊԱՔԱՆԱԿԸ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ՈՉՆՉԱՑՎԵԼ Է: ՄԵՆՔ ԳՐՔԻ ԵԶԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ ԲԱԶՄԱՑՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆՔ: ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԸ ԴԻՄԵՆ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՀԵՌ. 224426:

«ԵՐԵՔ ԱՐՄԱՎԵՆԻՆ» ԼԱ ՍԿԱԼԱՅՈՒՄ

Միլան, 1912 թվական։ Աշխարհի ամենահեղինակավոր բեմերից մեկում՝ Լա Սկալայում, Ալեքսանդր Սպենդիարյանի ներկայությամբ հնչում է նրա «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը։ Երաժշտասեր իտալացիները, շունչները պահած ունկնդրում են զարմանալի թարմ, մեղեդային երաժշտություն...

Պայծառ ու լուսավոր այդ երաժշտությունը, որ ստեղծվել էր ընդամենը մի քանի տարի առաջ և առաջին անգամ հընչել Պետերբուրգում, իսկ ապա՝ Մոսկվայում և Ռուսաստանի այլ քաղաքներում, զարմանալի արագությամբ սլացել էր արտասահման և կարճ ժամանակում նվաճել նաև Բեռլինի, Կոպենհագենի և Եվրոպայի այլ քաղաքների ունկընդիրների սրտերը։

Իսկ այժմ նա դյութել էր իտալացիներին։ Մեր մեծ «պանդուխտ» Ավետիք Իսահակյանը, որ գտնվում էր Իտալիայում, հիշում է, որ չընքնաղ այդ երաժշտության հարազատ հնչյունները, ասես, վերակենդանացրին իրեն օտար ափերում և սիրտն սկսեց ուժգին բաբախել։ Առավել մեծ հրճվանք ապրեց հայ բանաստեղծը, իմանալով, որ Սպենդիարյանի ստեղծագործությունները շատ հաճախ հընչում են Իտալիայի տարբեր համերգային դահլիճներում, սրճարաններում ու ռեստորաններում և ուղղակի փողոցում՝ երկրի լավագույն երաժշտախմբերի կատարմամբ։ Հայ կոմպոզիտորի երաժշտության ներդաշնակ հնչյունների ներքո,— հիշում է բանաստեղծը,— Վենետիկի նավավարները սահուն վարում էին իրենց գոնդոլները...

Արևելյան նազանքով ու դիթմերով հագեցած «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը շատ շուտով գրավեց նաև աշխարհի բեմադրիչների ուշադրությունը։ Աշխարհահռչակ բալետմայստեր Միխայիլ Ֆոկինը առաջինն էր դրանցից։ Եվ 1913 թվականի հունվարի սկզբին Ալեքսանդր Սպենդիարյանը երկու օր շարունակ ներկա գտնվեց Բեռլինի «Կոոլ» թատրոնում այդ հեքիաթային երաժշտությամբ բեմադրվող Ֆոկինի «Ջիների արքայի յոթ դուստրերը» բալետային ներկայացմանը, ուր գլխավոր դերում հանդես էր գալիս աստվածային Աննա Պավլովան։

Բալետի ռեֆորմատոր Ֆոկինը, որ մինչ այդ հայտնի էր Ռիմսկի-Կորսակովի, Չայկովսկու և այլոց ոչ բալետային սիմֆոնիաների հիման վրա ստեղծած իր բեմադրություններով, այս անգամ դիմել էր Սպենդիարյանի երաժշտությանը և հասել հիանալի արդյունքի։

«Այս բալետի երաժշտությունը,— ասել է ներկայացումը դիտելուց հետո Լայպցիգի կոնսերվատորիայի պրոֆեսոր, հայտնի դիրիժոր Արթուր Նիկիշը,— իր թարմությամբ զարմանալիորեն հիշեցնում է Գրիգին, և, այնուամենայնիվ, այն ձեր հրաշագեղ Արևելքն է...»։

Այստեղ ավելորդ չէ ասել, որ ուղիղ կես դար անց, 1963-ին, Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնը նույնպես բեմադրեց «Երեք արմավենին»՝ բալետմայստեր Եվգենի Չանգայի ղեկավարությամբ։

Այո, հիրավի համաշխարհային ճանաչման արժանացրեց հեղինակին «Երեք արմավենին», որի հիմքում ընկած է Կովկասի հոգևորդի՝ ռուս մեծ բանաստեղծ, Միխայիլ Լերմոնտովի համանուն պոեմը։

Առաջին անգամ չէր, որ հայ կոմպոզիտորը դիմել էր իր սիրած բանաստեղծի ստեղծագործությանը, սակայն, հատկապես այս պոեմն էր, որ բերեց նրան Գլինկայի անվան առաջին մեծ մրցանակը։ Ասենք, որ հետագայում նա ևս երկու անգամ արժանացավ այդ բարձր մրցանակին։

Ինքը՝ Սպենդիարյանը, իր սիմֆոնիկ պատկերի առաջին կատարումը Պետերբուրգում, որ տեղի ունեցավ 1905 թվականին, համարեց նույնպիսի շրջադարձային պահ իր ողջ ստեղծագործության համար, ինչը հանդիսացել էին կոմպոզիցիայի դասերը, որ նա ստացել էր նույն քաղաքում՝ Պետերբուրգի կոնսերվատորիայի պրոֆեսոր, անվանի կոմպոզիտոր Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովի մոտ՝ Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետն ավարտելուց հետո։

Հեղինակի ղեկավարությամբ կայացած այդ առաջին համերգն արժանացավ Ռուսաստանի երաժշտական ամենամեծ հեղինակությունների բարձր գնահատականին և այդ օրվանից նրանք սիրով ընդունեցին Սպենդիարյանին իրենց ընտանիքը։ Դրանց թվում էին Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովն ու Ալեքսանդր Գլազունովը, Անատոլի Լյադովն ու Միխայիլ Գնեսինը, Բորիս Ասաֆևը և Սերգեյ Վասիլենկոն.

Պատմում են, որ Ալեքսանդր Գլազունովը՝ իր տանը այդ համերգի առթիվ կազմակերպված ընթրիքի ժամանակ, բազմաթիվ հյուրերի ներկայությամբ առաջարկեց Սպենդիարյանին՝ այսուհետև «դու»-ով դիմել իրեն։ Ծփոթված կրտսեր Ալեքսանդրը ոչ մի կերպ չէր համաձայնվում, սակայն ավագ ընկերոջ համառությունը վերջ ի վերջո հաղթում է և նրանք բոլորի սպասողական հայացքների տակ եղբայրաթաս են ըմպում։

Ասենք, որ ռուս կոմպոզիտորների հետ ունեցած սերտ բարեկամությունը շարունակվեց նաև Սպենդիարյանի 1924-ին Հայաստան փոխադրվելուց հետո։ Եվ նրա հուզիչ երաժշտությունը, առաջվա պես, շարունակում էր հընչել Մոսկվայի Մեծ և Սյունաձարդ դահլիճների կամարների տակ, և այդ համերգներն, ինչպես հիշում են ականատեսները, մշտապես վեր էին ածվում սիրելի հայ կոմպոզիտորի մեծարման երեկոների, ինչը հազվադեպ էր լինում Ռուսաստանի մայրաքաղաքում։

Եվ առաջվա պես այդ բազմաթիվ համերգների մեխն էր հանդիսանում «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը։

Ցավոք սրտի, 1928-ին տեղի ունեցած Ալեքսանդր Սպենդիարյանի անժամանակ մահից հետո այդ համերգների հաճախականությունը Մոսկվայում սկսեց մարել։ Տարիներ անց, կոմպոզիտորի ծննդյան 100-ամյակը մեծ շուքով նշվելուց հետո, գրեթե նույնը տեղի ունեցավ նաև մեզանում։ Եվ ստացվեց այնպես, որ ամբողջ մի սերունդ անիրավացիորեն անհաղորդ մնաց, Արամ Խաչատրյանի խոսքով ասած, «այդ մեծ դասականի» չքնաղ երաժշտությանը։

Սակայն այս տարեսկզբին Արամ Խաչատրյան համերգասրահում Սպենդիարյանի ծննդյան 125-ամյակին նվիրված հրաշալի համերգը և վերջերս հանրապետության ռադիոյով ավելի հաճախ հընչող կոմպոզիտորի երաժշտությունը թույլ են տալիս հուսալու, որ մոտ ապագայում կընկին ժողովրդին ըստ արժանվույն կներկայացվեն հայկական կոնսերվատորիայի և հայկական օպերայի հիմնադիրներից մեկի չքնաղ արվեստը և մեր բեմահարթակներից ավելի հաճախ կհնչեն հայ ժողովրդական երաժշտության ոսկե ֆոնդ մտած նրա «Երեք արմավենին» ու «Ղրիմյան էսքիզները», «Երևանյան էտյուդը» ու հայ օպերայի գոհարը՝ հայրենասիրական «Ալմաստ» օպերան, որի առաջին բեմադրությամբ էլ բացվեց Ալեքսանդր Թամանյանի նորակերտ հրաշալի շինությունը՝ օպերային դահլիճի վարագույրը։ Նշենք, որ ավելի ուշ՝ 1951-ին, այդ հերոսական օպերան բեմադրվեց նաև Փարիզում, այստեղ ժամանած Լա Սկալայի արտիստ Ագրովի կողմից։ Նա եկել էր աշխարհի ամենահեղինակավոր թատրոնից, որտեղ դեռևս դարասկզբին հնչել էր Ալեքսանդր Սպենդիարյանի «Երեք արմավենին»՝ ընդմիշտ արմատներ գցելով երաժշտասեր իտալացիների սրտերում։

Լիդա ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հայաստանի ժուռնալիստների միության անդամ

Այն աշխարհից վերադարձածը

Սա անօրինակ սխրանքի պատմություն է, թե ինչպես հարյուրավոր բժիշկներ և ֆիզիկոսներ ԽՍՀՄ-ում և արտասահմանում՝ մարդկային ողբերգությանը հաղորդակից, տիտանական ջանքեր գործադրեցին՝ փրկելու մեր դարի խոշորագույն ֆիզիկոսներից մեկի՝ ակադեմիկոս Լև Լանդաուի կյանքը։ Եվ մարդկային գութը, համերաշխությունը, կամքը, իմացությունը, գիտելիքները, բարձր պրոֆեսիոնալիզմը արեցին անհնարինը, անհավանականը, անիրագործելին և այն աշխարհից հետ բերեցին մարդուն։

Մոսկվա. 1962 թվական. հունվարի 7, կիրակի...

Նախորդ օրը անձրև էր տեղացել, և գիշերվա սառնամանիքը փողոցները պատել էր սառցե ծածկոցով։ Սառցադաշտ հիշեցնող Դմիտրովյան խճուղու սկզբում, «Վոլգա» ավտոմոբիլնան, որով ակադեմիկոս Լանդաուն գնում էր Դուբնա, վթարի ենթարկվեց։

Ծառայողության մեքենան դեպքի վայր հասավ տասնչորսին մի քանի րոպե անց, և բժիշկը սարսափով արձանագրեց նաև, որ գլխից վիրավոր ուղևորի գլխին ինչ-որ մեկը ձյուն էր դրել։ Բազմաթիվ կոտրվածքներով վիրավորին հասցրին 50-րդ հիվանդանոց։ Բարեբախտություն էր։ Չնայած կիրակի լինելուն, հիվանդանոցում էր երկրի լավագույն վնասվածքաբանների մեջ՝ պրոֆեսոր Վաղենտին Պոլյակովը։

Վիրավորը կենդանության նշաններ ցույց չէր տալիս, դեմքը՝ արյունազուրկ էր, հոգեագույն։ Առաջին կոնսիլիումը գումարվեց վթարից 5 ժամ հետո, և սկսվեց տիտանական պայքարը վիրավորի կյանքի համար։ Գիշեր-ցերեկ հիվանդի կողքից չէր հեռանում նեյրովիրաբույժ Ֆյոդորովը, այն Ֆյոդորովը, որը, ինչպես ասում էին՝ «կարողանում է մարդուն էն աշխարհից հետ բերել»։ Իսկ վիրավորի վիճակը ոչ միայն չէր լավանում, այլ հակառակը։

Երրորդ օրը սկսեց տեղի տալ սիրտը։ Զարկերակը գրեթե չէր շոշափվում։ Հոգնա՞րք... Ֆյոդորովին հաջողվեց տասնցիորեն վերակենդանացնել վիրավորին։ Սրտի աշխատանքը կարգավորվեց, սակայն ընկրվեց աղիքների և երիկամների կաթվածը։ Բժիշկները հաղթահարեցին այս մահացու վտանգը ևս։ Տագնապը կարծես անցավ։ Բայց հունվարի 12-ի լուսաբացին վիրավորի շնչառությունը գրեթե դադարեց։ Կոկին հոգնարք։ Մի՞թե վերջ...

Կա էնգաթիեմի սարք (ապարատ), այլ խոսքով՝ «արհեստական թոքեր», որ օդ է մղում թոքերին և շնչում մարդու փոխարեն։ Հիվանդանոցում էնգաթիեմ չկար։ Թանկ էր ամեն րոպեն և վայրկյանը։ Օգնության շտապեցին գիտնականներն ու Լանդաուի գործընկերները։ Նրանք ճարեցին ապարատը, ծանր սարքը բարձեցին բեռնատարի վրա և իրենց ուսերի վրա հասցրին հիվանդասենյակ։

Էնգաթիեմի օգնությամբ բժիշկները մարդուն նորից կյանքի վերադարձրին։ Մահը նահանջեց երրորդ անգամ։ Հիվանդի վիճակը կայունացավ և ոչ ոք չգիտեր, որ վիրավորը ուժ է հավաքում վերջին, ամենասարսափելի պատուհասից առաջ։

Լանդաուի ծննդյան օրը, 1962 թվականի հունվարի 22-ի նախօրեին, սկսվեց ուղեղի և ամբողջ մարմնի այտուցը։ Բոլորի համար ակնհայտ էր՝ Լանդաուն մահանում է։

Ինչ-որ մեկը անսպասելի հիշեց մի դեղամիջոցի մասին, որ կա Լոնդոնում և Պրագայում։ Անգամ չգիտեին դեղորայքի անունը, սակայն հայտնեցին ակադեմիկոս Կապիցային։ Վերջինս անհապաղ հեռագրեց անգլիացի Բլեքթին, ֆրանսիացի Բիկարին և դանիացի Օռե Բորին՝ Նիլս Բորի որդուն։

Հեռագրին պատասխանեց Նիլս Բորը և հաջորդ օրը նրա ուղարկած դեղորայքը հասավ Մոսկվա։ Սակայն, դեղբախտաբար, հարկավոր դեղամիջոցը չէր։

Բիկարը դեղորայքը Փարիզում չգտավ և հեռագրեց Պրագա, ֆիզիկոս Նեմեցին, վերջինս շտապ գտավ Օորմին, և դեղորայքը ճանապարհ ընկավ Մոսկվա։

Առաջին ծանրոցը ստացվեց նաև Անգլիայից։ Պատրիկ Բլեքթթը Լոնդոնում չէր։ Սակայն հեռագրի բովանդակությունը այնպիսին էր, որ այն անմիջապես հանձնեցին մեկ ուրիշ նշանավոր ֆիզիկոսի՝ սըր Դուգլաս Բոքրոֆտին։ Հրատարակիչ Դաու Մաքսվելի օգնությամբ Բոքրոֆտը ճարեց դեղը։ Ուշանում էին Լոնդոն—Մոսկվա ինքնաթիռից և զանգահարեցին օդանավակայան. թռիչքը հետաձգվեց։ Բոքրոֆտը օդաչուին հանձնեց փաթեթը, որի վրա գրված էր երկու բառ՝ «Լանդաուի համար»։

Շերեմետևո օդանավակայանում հերթապահում էր հերթական ֆիզիկոսը։ Ստանալով դեղը, Ֆյոդորովը հուզված գոռաց. «Կեցցեն անգլիացիք»։

...Այն պահից, երբ վթարի լուրը տարածվեց գիտական շրջաններում, ֆիզիկոսները տասնցիորեն հեղեղել էին հիվանդանոցի միջանցքները։ Մտահոգ էին, լուռ։ Հիվանդասենյակից դուրս եկող բժիշկներին տագնապալից հայացքով հարցնում էին՝ ո՞ղջ է։ Վախը, որ ամեն վայրկյան կպատահի այն, ինչից սարսափում էին, բոլորին գամել էր տեղում։ Ստիպված եղան նրանց սենյակ հատկացնել։ Այսպես ծնվեց «ֆիզիկոսների շտաբը»։ Օտարի հերթապահության գրքում գրանցված է 87 անուն, այսինքն՝ 87 հերթապահություն։ Լանդաուի աշակերտները, տասնյակ ֆիզիկոսներ, դարձան դիսպետչերներ, ցրիչներ, վարորդներ, բեռնակիրներ, ամեն ինչ։ Նրանք էին, որ «արհեստական թոքեր» հսկա մեքենան իրենց ուսերին բերին հիվանդանոց, գիշեր-ցերեկ հերթապահեցին օդանավակայանում, բժիշկներին ազատեցին կազմակերպական բոլոր հոգսերից, տեխնիկական, տնտեսական, առորյա բոլոր խնդիրներից։ Անչափ պետք եկավ օտար լեզուների իմացությունը՝ հեռախոսի մոտ շուրջօրյա հերթապահության համար։

...Լանդաուն «արհեստական թոքերով» շնչեց քառասուն օր։ Հիվանդասենյակի լությունը խռովում էր միայն ու միայն մեքենայի ծանր շնչառությունը։ Իսկ հիվանդը, կյանքի և մահվան արանքում, առանց գիտակցության, պառկած է անտեղյակ ամեն ինչից՝ նա չի շնչում, սնունդը արհեստական է։ Մեկ և կես ամիս հետո, հիվանդի հայացքում իմաստ երևաց։ Դրանք առաջվա ապակյա-անշարժ աչքերը չէին, նրանք տեսնում էին, լսում, հասկանում։ Դա փետրվարի 22-ն էր։

— Հիվանդի կյանքը փրկված է,— ասացին բժիշկները։

...ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Կելդիշը, ակադեմիկոսներ Կապիցան և Արցիմովիչը պնդեցին միջազգային ընդլայնված կոնսիլիում հրավիրելու անհրաժեշտությունը։ Աշխարհի լավագույն մասնագետներն անմիջապես արձագանքեցին հրավերին։ Մոսկվա ժամանեցին Ջդենեկ Կունցը, Մարի Գարսենը, Ժերար Գիյոն, Ուայդլեր Փեննֆիլդը։ Կարդացին հիվանդության պատմությունը, ուսումնասիրեցին ռենտգենյան նկարները, քննեցին Լանդաուին և... ապշեցին։ Ինչպե՞ս է մարդն ապրում նման քաղում կոտրվածքներով և վնասվածքներով։ 72-ամյա կանադացի նեյրովիրաբույժ Փեննֆիլդը, որին թույլ էին տվել առանց վիզայի թռչել ԽՍՀՄ, Կելդիշի ուղեկցությամբ օդանավակայանից ուղիղ եկավ հիվանդանոց։

Փեննֆիլդը գտավ, որ պետք է գլխուղեղը վիրահատել։

Առավոտյան, երբ հիվանդի շուրջը հավաքվել էին բոլորը ու քննում էին առաջիկա անելիքները, Լանդաուին մոտեցավ կինը։

— Լյովա, դու ինձ ճանաչո՞ւմ ես։

Հիվանդը գլխով արեց։

...Առաջին բառը Լանդաուն արտասանեց ապրիլի 8-ի կիրակի օրը։ Նա բուժքրոջն ասաց. «Ծնորհակալություն»։ Բժիշկների և ֆիզիկոսների աշխարհը ցնծում էր՝ Լանդաուն սկսել է խոսել։ Ապաքինումը դանդաղ, բայց հաստատուն, առաջ էր գնում։

...Մայիսի 16-ին նա անսպասելի ասաց.

— Ես ինչ-որ տարօրինակ եմ դարձել։ Ամեն ինչ մոռանում եմ, ի՞նչ է եղել ինձ հետ։

Հաջորդ օրը նրա մոտ բերեցին հոգեբույժին։

— Լև Դավիդովիչ, խնդրում եմ նկարեք մի շրջան։

Լանդաուն թղթի վրա նկարում է խաչ։

— Իսկ հիմա, խնդրում եմ, նկարեք խաչ։

Լանդաուն շրջան է գծում։

— Ինչո՞ւ եք հակառակն անվում։ Խնդրում եմ, արեք այն, ինչ խնդրում եմ։

— Ես հենց դրանով էլ զբաղված եմ։ Դուք ինձանից պահանջում եք հիմարություն անել, և ես էլ կատարում եմ ձեր ցանկությունը։ Ձեր առաջադրանքները եթե ես ճշտությամբ կատարեի, դուք իրավունք կունենայիք կասկածել իմ մտավոր ընդունակություններին։

...Սեպտեմբերին Լանդաուին տեղափոխեցին գիտությունների ակադեմիայի հիվանդանոց։ Այստեղ էլ նրան հասավ լուրը իրեն շնորհված երկու մեծ պարգևների մասին՝ Լենինյան մրցանակի և Նոբելյան մրցանակի (Ե. Լիֆշիցի հետ միասին, տեսական ֆիզիկայի գրքերի համար)։

...Ամբողջ 1963-ը Լանդաուն անցկացրեց հիվանդանոցում և միայն 64-ի հունվարի 25-ին նորից ոտք դրեց իր տան շեմից ներս։

1967 թվականի հունվարի 22-ին լրացավ Լանդաուի 60 տարին, որը նշվեց արտակարգ շուքով. նրան շնորհավորեցին համաշխարհային գիտության մեծերը, պետական այրեր, մշակույթի գործիչներ։

1968-ի մարտի 24-ի առավոտյան Լանդաուն հանկարծ վատ զգաց։ Նրան հասցրին ակադեմիայի հիվանդանոց և որոշեցին անհապաղ վիրահատել։ Վիրահատության երրորդ օրը հիվանդի վիճակը նորմալ էր, կանոնավոր էին գործում կենսական բոլոր կենտրոններ։ Սակայն ապրիլի 1-ին նա նորից վատ զգաց։

— Այս օրը ես չեմ լուսացնի— ասաց Լանդաուն։

Այո, նա հասկանում էր, որ մեռնում է։ Գիտակցությունն այդպես էլ չմթագնվեց, և նրա վերջին խոսքերը եղան.

— Ես կյանքս վատ չապրեցի, ինձ մշտապես ամեն ինչ հաջողվում էր։

Հրապարակման պատրաստեց
Հենրիկ ԼԻԼՈՑԱՆԸ

Կրքով և հույզով

Երևանի համալսարանի հրատարակչությունը ընթերցողի սեղանին է դրել բանասիրության դոկտոր Գառնիկ Անանյանի «Հրապարակախոսություն և քննադատություն» գիրքը։ Հրատարակությունն իրականացվել է Միացյալ Նահանգների Արևելյան շրջանի և Կանադայի Կիլիկյան թեմի առաջնորդ բարձրաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի հովանավորությամբ և տեր և տիկին Արա և Հայկանուշ Մելքոնյանների մեկենասությամբ։

Գրքում զետեղված են հրապարակախոսության և քննադատության վերաբերյալ հեղինակի տարբեր տարիների անտիպ և տպագրված աշխատություններ ու հոդվածներ։

Ընթերցելով գիրքը, առաջին հերթին նկատում և արժանին ենք մատուցում բանասեր Գառնիկ Անանյանի արծարծած թեմաների ընդգրկման լայնությանը՝ և՛ ժամանակագրական, և՛ աշխարհագրական, և՛ նյութի առումով։ Մի կողմից հեռավոր միջնադար՝ Գրիգոր Տղա և Ներսես Լամբրոնացի, մյուս կողմից 18—19-րդ դարեր, և ապա Նիկոլ Աղբալյան, Եղիշե Չարենց, Հրանտ Մաթևոսյան։

«Հայ լրագրության առաջնեկը» հոդվածը, որ նվիրված է «Ազդարարին» և նրա ստեղծող Հարությունը քահանա Շմավոնյանին, Գառնիկ Անանյանը սկսում է հետևյալ խորիմաստ տողերով.

«Քարտեզի վրա հայրենիքներն իրարից բաժանվում են աշխարհագրական սահմաններով։ Քարտեզից դուրս բաժանվում ու տարբերվում են այլ՝ ոգեղեն սահմաններով, որ երբեք չեն դառնում գիծ ու գծագրություն, չեն համընկնում աշխարհագրական չափանիշներին։ Հայերիս դեպքում մի առանձնահատկությունն ևս դրսևորվում է. ճակատագրի բերումով ցրված աշխարհի չորս ծագերում, կրելով իրենց հոգիներում հայրենիքի պատկերը՝, մշտապես հարստացրել են այն կարոտի, վերադարձի, վերածնության երազանքներից ծնված հոգևոր ու մշակութային արժեքներով։ Ամստերդամում տպագրված առաջին գիրքը, Մադրասում լույս տեսած առաջին լրագիրը... չեն ամփոփվում Հայաստան երկրի աշխարհագրական սահմաններում։ Բայց Հայաստան աշխարհի ոգեղեն հարստության անկապտելի մասն են»։

Եվ հեղինակը գրքում մեծ սիրով, անթաքույց երախտագիտությամբ պատմում է հենց այդ ոգեղեն հարստությունն ստեղծող մարդկանց մասին, և ոչ միայն արժեքավորում ու գնահատում նրանց արածն ու ծառայությունը իրենց ժողովրդին, այլև այդ սիրով, երախտագիտությամբ, հիացումով վարակում նաև ընթերցողին։

Ներկա գրքում Գառնիկ Անանյանը ոչ միայն լրջախոհ բանասեր է, գրաքննադատ և ինչու չէ՝ նաև պատմաբան, այլ նաև կրքոտ հրապարակախոս ու քաղաքացի, որին հուզում ու ցավ են պատճառում անարդար ու տմարդի իրողությունները, մեր կյանքում նկատվող հոռի երևույթները։ Նրան անհանգստացնում է ճշմարիտ ժողովրդավարության ճակատագիրը, Չարենցի տունթանգարանի ապակիները ջարդելու քստմնելի փաստը, պատմությունը վերանձնելու անազնիվ նկրտումները, հայ դպրոցի բախտը և բազում ուրիշ կարևոր հարցեր։

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
Գլխավոր խմբագիր՝
Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ

Երևան—19, Մարշալ Բաղրամյան 24 դ, հեռախոս՝ 22-44-26։

«Պարբերական» հրատարակչություն տպարան։ Դասիչ՝ 69238. գրանցման վկայական՝ 448։ Տարագրված է տպագրության՝ 30. 08. 1997 թ. (1517 — 1541)։

Թերթի հովանավորն է «ԿԱՆԱՆԶ» ՓԲԸ

«ГИТУТЮН»—
(«Наука»)
Газета Национальной Академии наук РА

ԽԱՉԲԱՌ



ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.— 1. Ֆիզիոլոգ, ակադեմիկոս, բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, երկրի պետական մրցանակի դափնեկիր։ 2. Ռուս մաթեմատիկոս, ակադեմիկոս, 3. Ֆիզիկոս, ակադեմիկոս, երկրի պետական մրցանակի դափնեկիր։ 4. Օվկիանոսագետ, ակադեմիկոս։ 6. Ֆիզիկոս, ակադեմիկոս, պետական մրցանակի դափնեկիր։ 7. 12-րդ դարի պարսիկ նշանավոր բանաստեղծ և մտածող։ 10. Պատմաբան, ակադեմիկոս։ 11. Ուկրաինացի պաթոֆիզիոլոգ, ակադեմիկոս (Ուկրաինայի ակադեմիայի նախկին պրեզիդենտ), պետական մրցանակի դափնեկիր։ 15. Ռուս գիտնական, ռադիոյի հայտնագործողը։ 16. Ամերիկահայ գիտնական, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ։ 20. Հայ լեզվաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս։ 22. Գիտնական-անասնաբույծ, «ՎԱՍԽՆԻԼ»-ի իսկական անդամ։ 23. Ռուս ֆիզիոլոգ, ռուսական ֆիզիոլոգիական դպրոցի հիմնադիր, պատվավոր ակադեմիկոս։ 24. Մաթեմատիկոս, ակադեմիկոս, պետական մրցանակի դափնեկիր։ 28. Գիտնական էլեկտրազոդման գծով, ակադեմիկոս (Ուկրաինայի ակադեմիայի պրեզիդենտ)։ 29. Գիտնական, բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ։

ՀՈՐԻԶՈՆՏԱԿԱՆ.— 5. Հայ պատմաբան-արվեստաբան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ։ 8. Ռուս ֆիզիկոս և էլեկտրատեխնիկ, ակադեմիկոս։ 9. Քիմիկոս, ակադեմիկոս։ 12. Ռուս քիմիկոս-օրգանիկ, ակադեմիկոս։ 13. 19-րդ դարի գերմանացի ֆիզիկոս։ 14. Ֆիզիկոս, ակադեմիկոս, պետական մրցանակի դափնեկիր։ 17. Բուսաբան, ակադեմիկոս (ԽՍՀՄ ԳԱ նախկին պրեզիդենտ), պետական մրցանակի դափնեկիր։ 18. Բուսաբան, ակադեմիկոս, «ՎԱՍԽՆԻԼ»-ի պրեզիդենտ, պետական մրցանակի դափնեկիր։ 19. Ակնաբույժ, Ուկրաինայի ԳԱ ակադեմիկոս, բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, պետական մրցանակի դափնեկիր։ 21. 19-րդ դարի ռուս ֆիզիկոս, մի շարք հայտնագործությունների հեղինակ։ 25. Գրող-գրականագետ, Բելոռուսիայի ԳԱ նախկին փոխպրեզիդենտ։ 26. 16—17-րդ դարի անգլիացի փիլիսոփա, մատերիալիստ։ 27. 19-րդ դարի անգլիացի բնագետ-երկրաբան։ 30. Աստղաֆիզիկոս, ԽՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ, Վրաստանի ԳԱ նախկին պրեզիդենտ։ 31. Ռազմական պատմաբան, ԳԱ թղթակից անդամ, նավատորմի ծովակալ, պետական մրցանակի դափնեկիր։ 32. Ռուս գիտնական-էնցիկլոպեդիստ, մտածող-մատերիալիստ։

Կազմեց՝ Ստ. ԲԱԴԱԼՅԱՆԸ (Գյումրի)

ՄՐՑՈՒՐՅԹ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ

Գիտությունների ազգային ակադեմիայի ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը հայտարարում է մրցույթ՝ բարձր ջերմաստիճանային գերհաղորդականության լաբորատորիայի վարիչի թափուր տեղի համար։

Համաձայն ՖԼԻ կանոնադրության 4. 21 կետի՝ գիտական ստորաբաժանումների ղեկավարի համար թեկնածուներ առաջադրելու իրավունքը պատկանում է տնօրենին, ինստիտուտի գիտական խորհրդին, ստորաբաժանման գիտական անձնակազմին։

Թեկնածուների առաջադրման փաստաթղթերը տրվում են ինստիտուտի տնօրենին։

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝ 1 օրինակից.

1. Դիմում
2. Ինքնակենսագրություն
3. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ
4. Լուսանկար
5. ԲՈՒՀ ավարտելու դիպլոմի, գիտությունների թեկնածուի կամ դոկտորի դիպլոմի պատճենները։
6. Գիտական աշխատությունների ցանկ (երրորդ ձև)։
7. Բնութագիր աշխատանքի վերջին վայրից (ոչ ինստիտուտի աշխատակիցների համար)։

Դիմումների ներկայացման ժամկետը՝ 1 ամիս հայտարարության հրապարակման օրից։

Ինստիտուտի հասցեն՝ ՖԼԻ, Աշտարակ, հեռ.՝ 28-81-50։